«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
Տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

_____ Վ.Լ.Հարությունյան
14 դեկտեմբերի 2020թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Մարի Եսայի Ստեփանյանի «Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը և դրա բարձրացման ուղղությունները (ՀՀ առևտրային բանկերի նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Վլադիմիր Հարությունյան՝ *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ,* Տիգրան Հարությունյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ,* Քրիստինե Բաղդասարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Սվետլանա Դալլաքյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Լիլիթ Սարգսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Տաթևիկ Փարսադանյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ բանկային հատվածում բարձր ցուցանիշների ապահովման գործում կարևոր գործոններից մեկը մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումն է և ժամանակակից պայմաններում մեծ ուշադրություն է դարձվում այս գործընթացի արդյունավետության շարունակական բարձրացմանը: Այնուամենայնիվ, առկա են մի

արք խնդիրներ, որոնք խոչընդոտում են այս ոլորտի հետևողական զարգացմանը, մասնավորապես՝ ՄՌԿ կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակի և դրա առջև դրված խնդիրների ու գործառույթների անհամապատասխանությունը բանկի կառավարման կազմակերպական կառուցվածքին, ՄՌԿ ստորաբաժանումների անարդյունավետ աշխատանքը՝ պայմանավորված կադրերի զուտ հաշվառման գործառույթով, բանկերում անձնակազմի գծով ծախսերի ոչ օպտիմալ կառուցվածքը և այլն: Այս հիմնախնդիրների առկայությունը պայմանավորված է նաև առևտրային բանկերի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վրա ՄՌԿ համակարգի ազդեցության էմպիրիկ ապացույցների, ինչպես նաև այն փաստով, թե ՀՀ ֆինանսական շուկայում գործող բանկերի վրա ՄՌԿ համակարգի գործառույթներից որոնք են առավել մեծ ազդեցություն ունենում և նախասահմանում բանկերի գործունեության բարձր արդյունավետությունը:

Այդ ամենը պայմանավորում է բանկերում ՄՌԿ համակարգի գործառութային բարեփոխումների և արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը, ինչով էլ պայմանավորված է սույն ատենախոսության արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակը ՀՀ ֆինանսական շուկայում գործող բանկերում ՄՌԿ համակարգի արդի հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա գործառութային բարեփոխումների իրականացման և արդյունավետության բարձրացման հիմնարար ուղիների մշակումն է: Այդ նպատակի իրականացման համար ատենախոսության հիմքում դրվել են հետևյալ խնդիրները.

- մարդկային ռեսուրսների կառավարման տեսամեթոդաբանական հիմքերի ուսումնասիրություն,
- մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության գնահատման միջազգային փորձի համեմատական վերլուծություն,
- բանկային կառավարման համատեքստում մարդկային ռեսուրսների կառավարման առանձնահատկությունների ուսումնասիրություն,
- ՀՀ ֆինանսական համակարգում աշխատանքի շուկայի վերլուծություն,
- ՀՀ բանկային համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման առանձնահատկությունների ուսումնասիրություն,
- ՀՀ բանկային համակարգի համար մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության գնահատում,

բանկերի գործունեության արդյունքների նկատմամբ ՄՌԿ համակարգի ազդեցության գնահատման տնտեսամաթեմատի-կական մոդելի մշակում,

- ՀՀ բանկերի գործունեության արդյունքների նկատմամբ ՄՌԿ համակարգի ազդեցության գնահատման մոդելի գործարկման արդյունքների ամփոփում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը կայանում են հետևյալում՝

1. համակարգված տեսքով ներկայացվել են ՄՌԿ համակարգի ցուցանիշները և ՀՀ բանկերում ՄՌԿ արդյունավետության գնահատման մոտեցումները՝ ՀՀ ֆինանսական շուկայում գործող բանկերում ՄՌԿ համալիր գնահատման ցուցանիշների միասնական համակարգի մշակման նպատակով.
2. ՄՌԿ համակարգի համալիր գնահատման ցուցանիշների միասնական համակարգի հիման վրա մշակվել են ՀՀ առևտրային բանկերի ֆինանսատնտեսական գործունեության վրա ՄՌԿ համակարգի ազդեցության գնահատման նոր սկզբունքներ՝ որոշակի հսկիչ փոփոխականներով (բանկի մեծությունը, կազմակերպաիրավական կարգավիճակը, կապիտալի կառուցվածքը և այլն).
3. մշակվել և ՀՀ առևտրային բանկերի օրինակով գործարկվել է բանկերի գործունեության արդյունքների նկատմամբ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի ազդեցության գնահատման տնտեսամաթեմատիկական մոդել.
4. բացահայտվել է ՀՀ ֆինանսական շուկայում գործող բանկերի ֆինանսատնտեսական արդյունքների և ՄՌԿ համակարգի արդյունավետության միջև դրական կորելացիոն կախվածություն, ինչպես նաև առանձնացվել բանկերի գործունեության վրա առավել էական ազդեցություն գործող ՄՌԿ համակարգի ցուցանիշները, որի արդյունքում մշակվել են գործնական երաշխավորություններ ՀՀ առևտրային բանկերում ՄՌԿ համակարգի կատարելագործման ուղղությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 157 մեքենագիր էջի վրա, ներառյալ՝ գրականության ցանկը:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի հրատապությունը և արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, նշվել են տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևավորվել են հիմնական գիտական նորույթները և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում 'Արտահանման և տնտեսական աճի վերաբերյալ տեսական հիմնադրույթների վերլուծությունը' համակարգվում են տնտեսագիտական գրականության մեջ առկա տնտեսական աճի բնորոշումները, չափորոշիչները և դրա վրա արտաքին գործոնների ազդեցությունը կարևորող տեսությունները, դիտարկվում են արտահանումն ու տնտեսական աճը՝ դրանց կապը բնութագրող դասական և ժամանակակից տեսությունների համատեքստում, ինչպես նաև քննարկվում են արտահանման խրախուսման եղանակների տեսական հիմնադրույթները՝ արտահանմամբ պայմանավորվող աճ ապահովելու տեսանկյունից:

Ատենախոսության առաջին՝ **«Մարդկային ռեսուրսների կառավարման առանձնահատկությունները և արդյունավետության գնահատման հիմնախնդիրներըե** գլխում ուսումնասիրվել են ՄՌԿ տեսամեթոդաբանական հիմքերը, իրականացվել է ՄՌԿ արդյունավետության գնահատման միջազգային փորձի համեմատական վերլուծություն, ինչպես նաև ներկայացվել են ՄՌԿ առանձնահատկությունները միջազգային բանկային կառավարման համատեքստում:.

Ատենախոսության երկրորդ՝ **«Մարդկային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում»** գլխում քննարկվել են ՄՌԿ առանձնահատկությունները և արդյունավետության գնահատումը ՀՀ բանկային համակարգում:

Հեղինակի կողմից ուսումնասիրվել և վերլուծվել են ՀՀ առևտրային բանկերում ՄՌԿ համակարգի հիմնական գործառույթները՝ հիմնվելով համացանցային աղբյուրների, կադրային քաղաքականության, սոցիալական ծրագրերի, բանկային աշխատակիցների հավաքագրման և ընտրության սկզբունքների, անձնակազմի վարձատրության և այլ հրապարակված պաշտոնական տեղեկատվության ուսումնասիրության, ինչպես նաև ՄՌԿ վերաբերյալ գիտական հետազոտությունների արդյունքների վրա:

Ատենախոսության երրորդ **«Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ առևտրային բանկերում»** գլխում ներկայացվել է ՄՌԿ օրենսդրակազմակերպական ուղղությունները, մշակվել է բանկերի գործունեության արդունքների նկատմամբ ՄՌԿ համակարգի ազդեցության գնահատման տնտեսամաթեմատիկական մոդել:

Ատենախոսության ***«Եզրակացություններ»*** բաժնում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսության առաջին գիտական նորույթը հարկ էր ներկայացնել առավել հանգամանալից տեսքով:

2. Թեև հեղինակը ատենախոսությունում ներկայացնում է մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից մի շարք սահմանումներ և մեկնաբանություններ, այդուհանդերձ պարզ չէ, թե որն է անձնակազմի կառավարման և ՄՌԿ-ի միջև եղած տարբերությունը և որոնք էին այն հիմնական պատճառները, որոնց հետևանքով ՀՀ առևտրային բանկերի գերակշիռ մեծամասնությունը կադրերի բաժինը փոխելով անձնակազմի կառավարման բաժնի, այնուհետև վերափոխեցին ՄՌԿ ստորաբաժանման:

3. Աղյուսակ 26-ում հեղինակը ներկայացնում է հետազոտության վերահսկիչ փոփոխականների բնութագրերը, ըստ որի ՀՀ առևտրային բանկերը ըստ մասնագիտացման տեսակի բաժանում է ունիվերսալ, կորպորատիվ, մանրածախ և մասնագիտացված բանկերի: Նման դասակարգումը վիճահարույց է, քանի որ ՀՀ բոլոր առևտրային բանկերն այսօր հանդես են գալիս միայն որպես ունիվերսալ բանկեր:

4. Հեղինակը աշխատանքի եզրակացությունների հատվածում նշում է, որ բացահայտվել են ՀՀ բանկային հատվածում արտաքին միջավայրի ուղղակի և անուղղակի ներազդեցության այն գործոնները, որոնք ազդում են ՄՌԿ համակարգի վրա, սակայն այն պետք էր կամ ներկայացնել առավել համակարգված տեսքով և գնահատեր յուրքանչյուր գործոնի ազդեցության աստիճանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունում բարձրացված հարցերն արդիական են և լուսաբանված են անհրաժեշտ խորությամբ: Ատենախոսությունը ինքնուրույն և ամբողջական գիտական աշխատություն է: Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են 8 գիտական աշխատանքներում:

Մարի Եսսայի Ստեփանյանի «Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը և դրա բարձրացման ուղղությունները (ՀՀ առևտրային բանկերի նյութերով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի և թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակ

Մարի Եսսայի Ստեփանյանն արժանի է Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (14.12.2020թ., արձանագրություն թիվ 9):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ փոխտնօրեն
տնտեսագիտության թեկնածու **Լ. Սարգսյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ ավագ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու **Հ. Մարկոսյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ փոխտնօրեն, տնտեսագիտության թեկնածու, Լ. Սարգսյանի և նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու Հ. Մարկոսյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ք. Յու. Բաղդասարյան**
«14»դեկտեմբերի 2020թ.